



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Կ Ո Ձ Ը

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՎԱՏԱՑՑԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(Ընդունված Ս. Էջմիածնում գումարված Գերագույն Հոգևոր Խորհրդի և Լպիսկոպոսական համառոտ ժողովի 1954 թվականի հունիսի 7-ի նիստում)

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և նրա հավատացյալ ժողովուրդը խոր կսկիծով ողբում են այսօր մեծագործ, հայրենասեր և առաքելաշավիղ Հայրապետի՝ Ամենայն Հայոց երջանկանիշատակ Կարողիկոս Ս. Տ. Գեորգ Զ.ի մահը:

Հանգուցյալ Վեհափառ Հայրապետը մեր ազգային-եկեղեցական պատմության վերջին հիսնամյակի մեծավաստակ և հեղինակավոր հոգևորականներից մեկը հանդիսացավ: Նրա բովանդակ կյանքն ու գործունեությունը սերտորեն առնչվեցին մեր ժողովրդի պատմության և կյանքի հետ՝ իբրև մեծ ու անկաշառ հայրենասեր, ֆրիստոնեական կենդանի հավատի մարդ, հեռատես և անձնվեր հովիվ, տեսիլ ունեցող մարգարեատիպ տեսանող և առաքինի հոգևորական:

Երջանկանիշատակ Վեհափառ Ընդհանրական Մայր Աթոռի այն երջանիկ գաղափարներից մեկն էր, որն Իր աշխով տեսավ Իր սիրած Մայր Հայրենիքի վերածնունդն ու բարգավաճումը, Իր պանդուխտ որդիների մի մասի հայրենադարձը և ապագայի վառ ու երջանիկ հույսերով փակեց Իր աչքերը:

Վշտի այսպիսի ծանր օրերին, սակայն, հայ հավատացյալ ժողովուրդը և Հայ Եկեղեցին երբե՛ք չեն ընկնվել. ընդհակառակը, վիշտն ու դառնությունն ավելի են համախմբել, ավելի են միավորել մեր հավատացյալ ժողովրդին իր եկեղեցու և իր սիրասուն Հայրենիքի շուրջը:

Հանգուցյալ Հայրապետը մեզ լավանդ է բողբել ազգային-եկեղեցական միության և միասնականության սրբազան պատգամը: Նրա պայծառ կյանքը կենդանի ֆարոգ է հանդիսացել մեր ազգային-եկեղեցական միության և միասնականության: Նա իր Հայրապետության տարիներին աշխատել է որպես Բաղրության ցոլ և հաշտության աղավնի, Իր ազնվական հոգով, հայրապետական բարձր առաքինություններով համախմբել տարագիր Սփյուռքը Մայր Աթոռի և վերածնված Հայրենիքի ջերմացնող գաղափարների շուրջը: Հայրենիք և եկեղեցական միասնականություն—ահա՛ հանգուցյալ Հայրապետի գործունեության ուղենիշը:

«Հայոց Առաքելական Եկեղեցու միության արտահայտությունն է Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը»,— գրել է մեր հավերժ անմոռանալի մեծ Հայրապետը:

Մեր ամբողջ ազգային-եկեղեցական պատմությունն անհերքելի ապացույցն է այն պայծառ գիտակցության, թե մեր ժողովուրդը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին գոյատևել ու ստեղծագործել են Հայրենիքի և Ս. Էջմիածնի սիրով: 1600-ից ավելի տարիներ այդ սերը վառ է մնացել հայ հավատացյալ ժողովրդի հոգում: Հայ ժողովրդի պատմական անցյալում չի եղել հայ սրտերն իրար կամրջող ուրիշ այնպիսի համազգային սրբություն, քան

հախամեծար Ս. Էջմիածինը: Այս նվիրական անունը խորհրդանշան է հանդիսացել հայ ժողովրդի ազգային հոգևոր միասնության և կրոնական ինքնագիտակցության. «Մի է հայրն մեր, մի և միակրօն ազգն Հայոց» (Հովհաննես Երզնկացի):

Հայ ժողովուրդը ո՛ր էլ որ գտնվել է, երկրի ո՛ր ծայրն էլ նետել է նրան տխուր հակառակորդ, նա նույն եկեղեցու հարազատ զավակն է մնացել՝ Ս. Էջմիածնի հոգևոր ծնունդը: «Մի՛ մոռացուք քե՛ մեք ոստի եմք ի միոյ ծառոյն կենդանութեան ազգիս Հայոց, որ բնակի ի պատմական Հայրենիս, ի սահմանս Խորհրդային Հայաստանի», — գրել է Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Կաթողիկոսը, քարգմանը հանդիսանալով ամբողջ Սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովրդի հայրենասիրական և եկեղեցասիրական վառ զգացմունքներին:

Հայոց պատմության քե՛ փառքի օրերին, քե՛ դժբախտ օրերին, Ս. Էջմիածինը հանդիսացել է հայ ժողովրդի միասնականության և գոյության ամուր կովանը: Ս. Էջմիածինը իր քեների տակ առել ու պառել է հայ ժողովրդին՝ «որպէս հաւ գծագս իւր»:

Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը, իր պատմության ընթացքում, ղեկավարվել է Հայոց Առաքելական եկեղեցու մյուս նվիրապետական Արքունների նկատմամբ ֆրիստոնեական լայնախոհության ոգով և օրինակով, փոխադարձ սիրո և հարգանաց սկզբունքներով:

Այսօր ավելի քան երբեք պետք է արտահայտվի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետական Արքունների, մեր բոլոր քեմերի և մեր ժողովրդի սերտ միությունը: Ա՛յդ է պահանջում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հայ հավատացյալների գերագույն շահը: Ա՛յդ են պահանջում ժամանակի ոգին և հանգամանքները:

Մենք՝ ներկա ժողովին մասնակցողներս, մեր սեպուն պարտականությունն ենք համարում վշտի այս ծանր օրերին դիմելու համայն հայ ժողովրդին, հանգուցյալ վեհապետի մեզ ավանդ բողած միասնականության սրբազան պատգամով՝ է՛լ ավելի սերտորեն համախմբվել Հայ եկեղեցու, Մայր Հայրենիքի, հայ նվիրապետական Արքունների և մեր Միածնաէջ Մայր Արքո Ս. Էջմիածնի շուրջը:

Թո՛ղ Ամենակալի հզոր Աջը հովանի լինի Ամենայն Հայոց Ընդհանրական Արքոի վրա և մոտիկ ժամանակում վերացվի սգի սև փողը Մայր Արքոի վրայից:

Թո՛ղ Տերը անսասան պահի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, մեր նվիրապետական Արքունները և Մայր Արքո Ս. Էջմիածինը: Ամեն:

(Ս տ ո ռ ա գ Ր ո յ թ յ ու ն ն ե Ր)

ՎԱՀՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՇԱՎԱՐՇ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆ

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՍԱՀՅԱՆ
ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՄԱՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՏԱՅԱՆ
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՀՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

7 հունիսի 1954 թ.,

Էջմիածին

